

Հաստատված է  
ՀԱԱՀ գիտական խորհրդում  
„-----“, ----- 2016 թ.  
(արձանագրություն № )

Վավերացնում եմ  
Ս. Թարվերդյան  
„-----“, ----- 2016 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ ԲԱՅ ԹՈՂԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՆ  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

1. Սույն կանոնակարգը կարգավորում է տարբեր պատճառներով ուսումնական դասաժամերը բաց թողած հեռակա ուսուցման ուսանողների համար կազմակերպվող անհատական պարապմունքների իրականացման գործընթացը:
2. ՀԱԱՀ-ի ուսանողը, անկախ ուսուցման ձևից և աստիճանից, պարտավոր է կատարել բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին կարգապահության կանոններով և ուսումնական պլաններով սահմանված պարտականությունները:
3. Հեռակա ուսուցման դեպարտամենտի ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով նախատեսված ուսումնական պարապմունքների (6 շաբաթ) բոլոր ձևերին (դասախոսություն, գործնական, լաբորատոր) ուսանողների մասնակցությունը պարտադիր է:
4. Յուրաքանչյուր կանչի (15 օր) ընթացքում մինչև 3 օր հարգելի կամ անհարգելի բացակայության դեպքում ուսանողին թույլատրվում է կամ ուսումնական պարապմունքների ընթացքում, կամ պարապմունքներից հետո լրացնել բաց թողածը՝ անվճար հիմունքներով:
5. Յուրաքանչյուր կանչի (15 օր) ընթացքում մինչև 9 օր բացակայությունները ենթակա են պարտադիր լրացման: Ընդ որում՝ հարգելի պատճառներով (հիմնավորող

փաստաթղթերի առկայության դեպքում) բաց թողած ժամերը լրացվում են անվճար հիմունքներով, անհարգելի բացակայությունները՝ վճարովի: Մեկ ժամվա լրացման համար վճարի չափը սահմանվում է ըստ փաստացի ծախսումների:

6. Հարգելի և անհարգելի բացակայություն ունեցող ուսանողների համար կարող են կազմակերպվել անվճար ուսումնական պարապմունքներ այն առարկաների գծով, որոնք տեղի են ունենում հարակից մասնագիտությունների ուսումնական պարապմունքների ընթացքում (նույն ծրագրերի շրջանակներում):
7. 5-րդ կետում նշված, մինչև 9 օր անհարգելի բացակայություն ունեցող ուսանողի համար վճարովի հիմունքներով անհատական ուսումնական պարապմունքներ կազմակերպվում են միայն ուսանողի ցանկությամբ և դիմումի հիման վրա: Ուսանողը կարող է չմասնակցել անհատական պարապմունքներին և ընտրել ուսումը ժամանակավորապես դադարեցնելու տարբերակը՝ կուրսի կրկնում, ազատում բուհից՝ իր դիմումի համաձայն:
8. Յուրաքանչյուր կանչի ընթացքում առողջական վիճակի կամ այլ հարգելի պատճառներով 9 օրից ավելի բացակայության դեպքում ներկայացրած համապատասխան փաստաթղթերի հիման վրա ուսանողին տրվում է ակադեմիական արձակուրդ կամ նա կրկնում է կուրսը: Նկատի առնելով, որ մեկ կանչի ընթացքում 9 օրից ավելի բացակայությունների դեպքում բաց թողած դասաժամերն ընդհանուր ծավալի կեսից ավելի են, և անվճար հիմունքներով անհատական պարապմունքների կազմակերպումը կապված է լրացուցիչ ծախսումների հետ, ուսանողն իր ցանկությամբ կարող է հրաժարվել ուսումն ընդհատելու տարբերակներից և մասնակցել վճարովի հիմունքներով կազմակերպվող պարապմունքներին:
9. Ուսումնական պարապմունքների յուրաքանչյուր կանչի ընթացքում 9 օրից ավելի անհարգելի բացակայություն թույլ տված, սակայն ուսումնական պարապմունքներին մասնակի մասնակցած ուսանողներին կարող է տրվել հնարավորություն վճարովի հիմունքներով, անհատական պարապմունքների միջոցով լրացնելու բաց թողածը: Վճարովի հիմունքներով պարապմունքները կազմակերպվում են միայն ուսանողի ցանկությամբ՝ ներկայացրած դիմումի

համաձայն: Հակառակ դեպքում տվյալ ուսանողի ուսուցումը համարվում է ընդհատված, ինչը ձևակերպվում է համապատասխան հրամանով:

10. Ուսումնական պարապմունքներին չմասնակցած ուսանողը հեռացվում է համալսարանից կամ հիմնավոր պատճառների ներկայացման դեպքում թողնվում է նույն կուրսում:
11. Սույն կանոնակարգի հիմնական դրույթները պետք է ներառվեն կամ արտացոլվեն ուստարվա սկզբում ուսանողի հետ կնքվող պայմանագրում: